

ՏԸ ԿՈԼ ԵՒ ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Posted on December 22, 2020 by Keghart



Category: [Opinions](#)



Վազգէն Մանուկեան 1991-ին Փարիզի մէջ կայացած իրեն ի պատիւ հաւաքի մը ժամանակ կրկնած է Ֆրանսայի զինուորական եւ քաղաքական մեծագոյն դէմքերէն Չոր. Շարլ Տը Կոլի «Je vous ai compris» - Ձեզ հասկցայ» նախադասութիւնը, արտասանուած 1958-ին:



Ֆրանսա-Ալճերիա

ճգնաժամային օրերուն ան այս խոստումով կը հանգստացնէր հազարաւոր ալճերիածին ֆրանսացիները, որոնց փափաքն էր Ալճերիան (որ ֆրանսայի կողմէ գաղութացուած էր) միացնել ֆրանսայի: Մեծ յոյսեր ներշնչող Տը Կոլ թեւերը տարածած կը հաւաստիացնէր թէ իրենց իղձը պիտի կատարուէր: Յետագայ տարիներուն

~~քաղաքականութիւնը փոփոխեցաւ, Տը Կոլ համաձայն եղաւ Ալճերիոյ անկախութեան եւ~~
Ալճերիոյ բնիկ ֆրանսացիները ստիպուեցան զանգուածաբար ձգել երկիրը եւ
ապաստան փնտռել Ֆրանսայի մէջ: Անոնք մոլորուած էին վարչապետական սին
խոստումով: Քաղաքագետ Տը Կոլ, որ Ֆրանսայի նախագահը դարձած էր,
պարզապէս խաբած էր զիրենք:

Այս երգիծանկարին մէջ երիտասարդ Վազգէն Մանուկեանն է, որ 1991-ին Օփերայի
առջեւ ելոյթ կ'ունենար, որպէս Ղարաբաղ Կոմիտէի անդամ: Վերջերս անոր
ելոյթը...հարիւրաւոր բողոքաւորներու առջեւ, կը յիշեցնէր ֆրանսացի զօրավարին սին
խոստումը:

**Գրիգոր Քեօսէեան հայ մեծագոյն երգիծանկարիչներէն մէկն է: Ան
շարունակած է մեծ ծաղրանկարիչ Ալեքսանտր Սարուխանի ընկերային եւ
քաղաքական ուղղութիւնը: Հեղինակ է քանի մը ուշագրաւ
աշխատութիւններու: Ատեն մը ձեռնհասօրէն վարած է «Պայքար»ի
խմբագրապետութեան պաշտօնը: Այժմ կ'ապրի Պոսթըն, ԱՄՆ: Խմբ.**

Comments



Vahe – 2020-12-23 00:21:08

Amazing, by this article you are not bringing any solutions other than supporting Pashinyan. Are we going back to 70 years to communist times when it caused division of the diaspora?